

ուեցինք: Այդ բաժանումը անհրաժեշտ էր, որպէսզի աւելի ուշ կարողանանք դրսևւորել հրաշալի այն ճարտասապետութիւնը, որը նախատիպը եղաւ տիեզերքը զգալու նոր ձևէ, գրեթէ ամբողջ Փոքր Ասիոյ եւ Եւրոպայի համար:

— Ճարտարապետութիւնը բխում է ուղիւ:

— Հոյակապ յորինուած, ուր բանականութեան ամէն մի գործողութիւնը յստակօրէն զետեղուած է, ուր հողեկան թոխչքը անմիջականօրէն արտայայտուած է, ուր տիեզերագագացողութիւնը թրթուռն երաժշտութեան է վերածուած, ուր զազանիքը այնքան զազանի է եւ ճշմարտութիւնը կայուն: Նկատեցէք, որ եթէ վաղը թուրքերը մեր երկրից մեկնեն՝ նրանց մզկիթները վրայ մենք խաչ չենք բարձրացնի եւ մէջը չենք աղօթի: Նոյնը ուս եկեղեցիներում: Դուք չէիք, որ ցաւում էինք, որ Երևանի ուս եկեղեցին կանգուն է մնացել, որ պէտք էր առաջի օրն իսկ, երբ մտաք քաղաք, ումբակոծել... Ու չկայ հայ կոմունիստ, որ այդպէս չմտածի: Բնական է: Ռուս կրօնական ճարտարապետութեան նախատիպը Սուղդալի փայտէ շէնքն է, որ աւելի ուշ նրանք քարի են վերածել: Հայկական, հնդկական, չինական բոլոր մոթիվները կան, բայց չկայ հողեկան միութիւնը, չկայ այն, ինչ որ ունէին հելլադացիք եւ ունինք մենք, — հողեկան կարգապահութիւնը, մի գմբէթի կարկառուն յրստակութիւնը, ենթակայական բարոյականութիւնը: Քարերի հսկայ այդ կուտակումները վերին աստիճանի անկայուն են, փխրուն, ամբողջովին կազմուած շուքերից, ստուերներից, եւ լոյսից՝ ներքին լոյսից՝ նրանք այնքան զուրկ են, որ ուսները սէտք են զգացել գրմբէթները ոսկեջրել: Փայլունը միշտ էլ հրապուրել է բարբարոսներին:

Տեսէ՛ք վրացիները. նրանք, որ ճարտարապետութիւն երբեք չեն ստեղծած, այլ ընդօրինակած են մերը, դիւրին կերպով աղօթում են նաեւ ուս եկեղեցիներում: Նրանք ազգ չեն, այլ եղել են եւ ձգտում են լինել պետութիւն: Իսկ պետութիւնները միշտ էլ պատահական եւ ժամանակաւոր բնոյթ են կրում, մնայունը ազգն է:

— Դուրս է դալիս, որ ամբողջ Փոքր Ասիայում միայն հայերն են ազգ:

— Ասածս գոնհիկ հայրենասիրութեան թելադրութիւնն է, այլ բոլորովին առարկայական մտածման արդիւնք: Փաստը այն է, որ կովկասեան լեռնաշղթայից մինչեւ Միջերկրական տարածուող երկիրը՝ յենուած է հայ ազգի հողեկան հաւասարակշռութեան վրայ: Եկտր, վրանաբնակ ժողովուրդները անգիտակցաբար կառչած են այդ տեւական եւ հաստատուն ուժին. նրանք ենթարկուած են նրա ճակատագրական եւ զազանի ազդեցութեան. այստեղից նրանք սնունդ են առնում, հիմնաւորում իրենց լինելիութիւնը եւ պատճառաբանում իրենց գոյութեան նպատակը: Այդ ամէնը տեղի է ունենում մեզ շրջապատող տարրերի ենթագիտակցութեան մէջ, առանց որ նրանք կարողանան ըմբռնել իրողութիւնը, հաշիւ տան թաքնաթաքուր հաղորդակցութեանց աշխարհի մէջ տեղի ունեցող այդ հողեկան գործողութեանց մասին: Նրանք իրենց զգում են բանտարկուած, կաշկանդուած այդ ստեղծագործական ճիգ պահանջող մթնոլորտի մէջ, ու մեր կարկառած հողեկան հացի դէմ նրանք կարկառում են սուր, սուրն եւ ատելութիւն: Յիմարները չեն իմանում, որ եթէ մենք անհետանանք, մի քանի տարուան մէջ իրենք կը փոշիանան, եւ այնտեղ, ուր մարդիկ էին բնակում, գայլերը կը թափառին: Դժբախտութիւնը սակայն նրա մէջն է, որ մենք իսկ մեր այդ դերը չենք զիտակցում: Ճակատագրի անողորմ ձեռքերի մէջ կոյր զէնք ենք. դարերի խորքից, լեռների կատարին նետուած նեա, որ շարունակում է սուրբալ մրրիկների եւ փոթորիկների մէջ: Դէպի ո՞ւր, դէպի ո՞ւր... Եւ ահա, հայ գիւղացին, փորել է լեռը ու մէջը նստել: Նստել է արջի նման եւ սպասում է, որ անցնի դարեշրջանի ձմեռը. անցնին փայտէ շէնքերի անկայուն պատրանքը եւ օրը ներկայանայ պսպղուն եւ արեւաշատ: Նա ըմբռնում է՝ կենդանական իր բնագրով եւ գերմարդկային իր յայտնատեսութեամբ, որ իր հողեկան աշխարհի հիմքը միայն լեռան հաստատուն կայունութիւնը կարող է ձեւաւորել, որ մրրիկը գլուխը պատուում է ժայռի դէմ, որ դարերը արեւի ետեւից վաղող դժբախտ որսորդներ են,